



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5000000

835

5-76



Հրատարակութիւն «Լուսնայ»ի Խմբագրութեան

ԺՕՐԺ ԷՍՊԱՐԱ ✓



ՄԱՊՈՒՂԸ

Թարգմանեց

ՕՐ. ՆՈՒՆՐԿ ԵՂՆՆԵՆՑ

Բ.

Երկրորդ տպագրութիւն

Թ Ի Շ Ի Ս

Արագատիւ Ա. Զուժաթելածէի, Նիկ. 21

1904

3 - 93

Ե - 76

83-93

5-86

Հայկ. ԲԻՐՏ. 20 9 2011
30 MAY 2011
ԿԻՄ ԻՄ. ԿՆՅ. ԿՆՅ.

ԱՅ. Հրատարակութիւն «Լուսնայ»ի Խմբագրութեան

ԺՕՐԺ ԷՍՊԱՐՔ



ԳՈՒԶԸ

Թարգմանեց

ՕՐ. ՆՈՒՐԻ ԵՂՆՆԱՆՆ

Բ.

Երկրորդ տպագրութիւն

Թ Ի Գ Լ Ի Ա

Արագատիպ Ա. Բուժաթիւածրի, Նիկ. 21

1904



Պատկերասրահի 1-րդ համարը

ԳՐԱՐԱՆ

ԳՐԱՐԱՆ

Доволено цензурою. Тифлисъ, 24-го Октябрѣ
1903 г.

ԳՐԱՐԱՆ

ԳՐԱՐԱՆ

ԳՐԱՐԱՆ

ԱՊՈՒՀԸ

Ժորժ Էսպարզի.



Երս բերէք այդ երիտա-
սարդին, — հրամայեց
պրուսաց կայսրը:
— Ահաւասիկ, ձերդ
մեծութիւն:
Ապուշը ներամտաւ:
Խորին լուսթիւն էր
տիրում, երբ կայսեր
աչքերը հարցական կերպով զննում էին ձեր-
բակալուած մարդու կերպարանքը: Նորա ե-
տևը, լարի պէս ձգուած, կանգնած էին երկու
սպաններ լուռ սպասողական դրութեամբ: Մի-
միայն պատի ժամացոյցի համաչափ ճոճալու
ձայնն էր լսուում:

Կայսեր հայեացքը դեռ էլի բռնուածի վերայ էր դադարած: Նա աչք ածեց նորա՝ գզգզուած մազերով, անմիտ, վախկոտ աչքերով՝ կոպիտ գլխին: Սորա ներքեի, կախ ընկած շրթունքից անընդհատ լորձունք էր հոսում. գրեթէ անհաւանական էր թուում, որ այս քաղանացած մարմնում մարդկային հոգի կարող էր բնակուիլ: Գլուխը, որ աւելի կաւի կոյտի նման էր, համարեան սարսափ էր ազդում:

— Դեհ, պարոններ, ինչ կատէք սորա մասին, — հարցրեց կայսրը: — Միայն Ֆրանսերէն խօսեցէք դորա մասին: Ի՞նչ էք կարծում:

— Որ սա ամենեկին ապուշ չէ, ինչպէս կարծուում է, և որ ձերդ մեծութիւնը վստահ կարող էք հարց ու փորձ անել:

— Ուրեմն, դուք ան մարզն էք, — սկսեց կայսրը, — որին իմ գնդաձիգները բռնել են ս. ամսի 19 ի գիշերը Գը-Չէվէր գորապետին գաղտնի շուր տալու համար:

Ինքնակալը վերցրեց մի թուղթ և մեկնեց գերեալին. բայց վերջինս չշարժուեց և վերջնայեց:

— Այնպէս է ձեանում, թէ դեռ խուշուր համր էլ է, — նկատեց սպաներից մէկը: — Սա մի խորամանկ խաբէբայ է. — աւելացրեց նա, — գարկելով ապուշին:

Սա նայեց նորան և ինքն իրան ծիծաղեց:

— Այս նամակը ակնյայտնի ապացոյց է ձեր յանցաւորութեան: Գաղտնիքը բացուած է: Վերջ տուէք այս կատակերգութեան և պատասխան տուէք:

Ապուշի աչքերն անմտաբար յաճում էր իւր շուրջ: Մինչդեռ կայսեր խմբի ձեր զօրապետը անթարթ նայում էր բռնուածին: Նսարտաքուստ ալեգարդ ու պատկառելի մի մարդ էր: Այդ միջոցին նա մօտեցաւ անծանօթին և ասաց.

— Ձանաչեցի ձեզ, պարոն մարկիզ:

Լրտեսը, կարծես, ոչինչ չէր հասկանում. նա անմտաբար գլուխն սկսեց այս ու այն կողմը փանել և լորձունքը թափուում էր բերանից: Նորից ծանր լուութիւն տիրեց, և միմիայն ժամացուցի ձայնն էր հնչում:

Ինք, — նորից սկսեց խօսել կայսրը, — իմաց էք տուել Գը-Չէվէր գորապետին, որ բռնած ունէր Ախենի մօտի գորաբանակը, որ նա պահանջէ այնտեղ դարձեալ պաշտպան գործ նստալի, Օվէրնի և այլ գորազնդերից...

Ապուշը լարուած ու շարժութեամբ հետեւում էր յատակին սողացող ճանճին. ոտի պինդ հարուածով նա յանկարծ ճիւղեց միջատը:

ցաւ դէպի առաստաղը, բայց ապուշը շարժման
ոչ մի նշան չարեց:

Կայսրը ծիծաղեց:

— Իէ՛հ, զօրապետ, այժմ ինչ էք մտա-
ծում: Իե՞ռ էլի ենթադրում էք, թէ այս
ջահելը խուլ չէ:

Ծեր մարտիկը մինչև անգամ գո՛ւն ատուեց
կարեկցութիւնից: Նորից լուութիւն տիրեց.
կատարեալ սպասողական վիճակ:

— Ա՛խ, էլ ինչ, — ասաց կայսրը, որին
յոգնեցրել էին այդ բոլոր անպտուղ վարձերը
— այս արարածը ոչ այլ ինչ է, բայց չթէ մի
թափառաշրջիկ: Ո՞վ բերեց սորան այստեղ:

— Իեղին հուսարներից մէկը, ձեզդ մե-
ծութիւն, որ յայտնի է իւր սրամտու-
թեամբ:

— Աւելի վատ: Մէկ նայեցէք այդ Քլեօն.
նորա վերայ մտաւոր կեանքի չնչին նշան
անգամ չէ նկատուում. մեռած հոգի է, աւելի
ոչինչ:

Ձգուանքի արտայայտութիւնը երեսին,
կայսրը յետ դարձաւ դէպի լուսամուտը և
հէնց որ պատրաստուում էր դուրս գնալ՝ ծեր
զօրապետը յետ պահելով՝ հանդարտ ասաց
նորան.

— Վստահանում եմ խնդրել, ձեզդ մե-

ծութիւն, որ դեռ չգնաք: Մնացէք, Տէր,
դարձեալ մի քանի րոպէ: Առաջ ես ևս կաս-
կածում էի, բայց այժմ հաստատ համոզուած
եմ, որ այս մարդը արտասովոր ճարպիկ աչ-
քակապ է: Սա զարմանալի կերպով կատարում
է իւր դերը... Ծիշտ է, պարոն մարկիզ, դուք
շատ զեղեցիկ էք կատարում ձեր ձեռնա-
ծութիւնները, — դարձաւ նա բարձր ձայնով
դէպի բռնուածը, անթարթ նայելով նորա
աչքերին:

Ապուշը չշարժուեց անգամ:

— Այն ինչ, ասաց կայսրը, — ամեն ինչ
այդ ենթադրութեան հակառակն է ապացու-
ցանում: Այս անխելք, դժբաղտ, կեղտոտ
մարդը...

Զօրապետը մօտ գնաց ապուշին և օձիքը
դուրս խլեց նորանից. ցրնցոտիների տակից
կեղտից սևացած կաշի դուրս թռաւ:

— Ձերդ մեծութիւն. — ասաց ծեր զօրա-
պետը, — ես թախանձագին խնդրում եմ ձեզ,
որ երկուսով առանձին խօսենք. իսկ այս մար-
դը դեռ թող տեղից չշարժուի:

— Լա՛ւ, հետևեցէք ինձ, — ձայնեց նորան
կայսրը:

Սենեակից դուրս գնալով՝ զօրապետը սկսեց.

— Երգւում եմ ձեզ, որ չեմ մոլորում,

արքայ:

— Իսկ ես կարծում եմ, որ դուք միայն յամառուում էք, — ծիծաղելով պատասխանեց կայսրը:

— Ո՛չ, ո՛չ, ձերդ մեծութիւն, հաստատապէս ո՛չ: Խնդրում եմ ձեզ մի փոքր ևս համբերել, ձերդ մեծութիւն: Ուրիշ միջոցներ էլ կան. մէկի վերայ ես առանձնապէս յոյս ունիմ:

— Այդ քնչ միջոց է:

— Տեսնում էք, ձերդ մեծութիւն, մենք ֆրանսիացու հետ գործ ունինք: Նա խրանջի մասնի. այդ բանի համար նա շատ լուր է ուսել իւր դերը: Ձերդ մեծութիւնը ծանօթ է արդէն այս հերոսական ժողովրդին. այս մարդիկ անվեհեր են, անհոգ, բայց և հետք միասին...

Այս միջոցին նոքա քաշուեցան հաշտի անկիւնը և սկսեցին խօսակցութիւնը շարույցակել ցածր ձայնով: Շուտով դուրսը լսուեց հեռացող կառքի մի ձայն. ապա մի քանի րոպէից կառքը վերադարձաւ մի ում որ բերելով նստած: Կայսրն ու զօրապետը նորից ձեռքարձան դահլիճ:

Ապուշը առաջուայ պէս բուրթ հայեացք էր գցել իւր առաջ:

Բացի կայսրից, որ նորից նստեց, յենուելով աթոռի մէջքին, բոլոր ներկայ գըտնուողները անթարթ նայում էին ապուշին: Փոքր առ փոքր ամենքին սկսեց տիրել կայսեր կասկածը: Նորա և զօրապետի բացակայութեան ժամանակ թշուառ յիմարը աթոռը կոտրել էր, փոխ առ փոխ մէկ քահաճում էր, մէկ հանդարտ լաց լինում, մէկ բոլոր ուժով մռնչում: Թանաքամանի մէջ ցցուած փետուրը տեսնելով՝ նա կատաղեցաւ, այնպէս որ մեծ դժուարութեամբ կարելի եղաւ պահել նորան սենեակի մէջ տեղը: Այժմ նա կանգնած էր կապուած, և միայն գլուխն էր կամաց շարժում այս ու այն կողմ:

— Ձերդ մեծութիւն, — նորից սկսեց զօրապետը, — իսկոյն հնար կուենանք դատել այս լրտեսին: Վերսայլում ճանաչում են սորան, ինչպէս ազնուականի: Այստեղ մեզ մօտ մի տիկին կայ Հալբերշտատից, որ Մարիա Լէշչինեան թաղուհու սենեկապետն էր. նա լաւ է ճանաչում ֆրանսիական արքունիքի մերձաւոր ամեն մէկին: Ուղարկել եմ նորան կանչելու, և եթէ ձերդ մեծութիւնը թոյլ տայ՝ մենք նորան կներկայացնենք մարկիզին: Կայսրը գլխով համաձայնութեան նշան տուեց: Երկու պահապան դուռը բաց արին:

Թեթև, անձայն քայլերով հանդարտ ներս մտաւ հրաւիրեալը:

— Տիկին, ծանօթ է ձեզ այս ֆրանսիացին, — հարցրեց կայսրը:

Տիկինը հարցական կերպով նայեց անֆանթին, ապա վստահութեամբ պատասխանեց.

— Ոչ, ձերդ մեծութիւն:

— Լաւ, — մէջ մտաւ զօրապետը. — ձեզ նորից կկանչենք, երբ պէտք կլինիք: Միայն, խնդրեմ, այն դռներով դուրս գնացէք:

Այս պատուէրը կատարելու համար տիկինը պէտք է անցնէր նոյն իսկ աւզուշի կողքի սենեակի միջով:

Նորից կատարեալ լուսթիւն տիրեց սենեակում:

Գերեալի մօտից անցնելով տիկինը յանկարծ սլլաց, մի թեթև ճիչ արձակեց և ընկաւ ծունկի վերայ:

Նոյն վայրկենին փոխուեց աւզուշի կերպարանքի արտայայտութիւնը.

— Ո՛հ, տիրուհի, թո՛ղ տուէք ինձ... — և յանկարծ կանգ առաւ:

Ներկայ եղողների մէջ կատարեալ շփթ վեր ելաւ: Կայսրը վեր թռաւ, մահապաճան դեղնած: Տիկինը սուս ու փուս անյայտացաւ:

— Ախ, լիմօր, — կարեկցութեամբ փնթփնաց մէկը:

Ներքևից բակի կողմից լսուեցաւ ծանր կօշիկների միաձայն թրըխթրըխկոցը, այնուհետև հրացանների նշան դնելու ձայնը: Օդի մէջ բարձրաձայն և պարզ հնչեց մարկիզ Անտուան Դը-Կօադիլիօի ձայնը «Կեցցէ Ֆրանսիայի կայսրը»:

Լսուեց քսան հրացանների միահամուռ տրաքոցը, ուղղուած դէպի մի սիրտ...

— Այս եղանակով միշտ կարելի է բռնել նոցա, — շնչում էր ինքն իրան քթի տակ ծեր զօրապետը:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



Faint, illegible text at the top of the right page, possibly bleed-through.

Faint, illegible text in the middle of the right page, possibly bleed-through.

Faint, illegible text in the lower middle of the right page, possibly bleed-through.

Faint, illegible text at the bottom of the right page, possibly bleed-through.

<< Ազգային գրադարան




NL0398100

✓
որ. Նուարդ Աղանեանցի թարգմանութիւն-
ները.

- | | | | |
|----------------------------------|---|---|------|
| 1. Սև հացեր. Բ. տպ. | . | . | 5 Կ. |
| 2. Յպուշը. Ժ. Էսպարբի | . | . | 5 Կ. |
| 3. Գթութիւն. Ժ. Լըմետրի. | . | . | 5 Կ. |
| 4. Ուղեղի նորոգումը. Փ. Գիլմէյի. | . | . | 5 Կ. |

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

վաճառուում է Հոսմայի խմբագրատանը :



1334